ՆՍՕՏՏ Գարեգին Բ Ամենայն

Հայոց կաթողիկոսին

Միշա Սեդրակյան | ք. Վանաձոր, Տիգրան

Մեծի 4, բնակ. 4-2 (ա.հ.խ. 2-36-42)

Մեծարգո ս-ն

1. 1980 թվականից ես հրավիրվում էի ՀԽՍՀ-ի Գիտությունների ակադեմիայի (ՀԳԱ) ընդհանուր ժողովներին: ՀԳԱ ընդհանուր ժողովներից մեկի (1985թ. կամ 1986թ.-ի ժողովներից մեկում) բացման խոսքում շատ հարգելի Վիկտոր Համբարձումյանը անդրադարձավ մի հարցի, որը ներկայացնում եմ իմ ընկալմանը:
2. Նա բերեց մի օրինակ, թե ինչպես մի հայ հնագետ, հնէաբանական պեղումների ժամանակ գտել էր արժեք պարունակող ինչ-որ բան և փորձել էր հիմնավորել, որ գտածը զուտ տեղական հայկական, աշխատանքի արդյունք է: Հայաստանի Հնէագետների ու հնէաբանների միասնական ու նպատակային գործողություններով մերժվել էր երիտասարդ հնագետի վարկածը և գտածին վերագրվել էր Հայաստանում բերովի – շումերական լինելու գաղափարը:
3. Տարիներ անց հարևան Վրաստանում (այս անգամ վրացի հնէաբանը) պեղել էր նույնանման մի բան, ինչը հիմնավորել էր գտածոների տեղական (հայկական, վրացական, այլ ոչ թե շումերներից բերովի) լինելը:
4. Բերած օրինակից վերցնելով <u>բերովի</u>, <u>ոչ տեղական</u> լինելու գաղափարը՝ նա նշեց, որ հետազոտությունների այդ ուղղությամբ մեր գիտնականները ավելի շատ աշխատանքներ են իրականացնում, քան դրանց ոչ բերովի, տեղական լինելու ուսումնասիրությունների ուղղությամբ: Ակադեմիայի գիտական հիմնարկների ու գիտնականների այդպիսի գործելակերպը նա ազգի համար խոցելի ու կորստաբեր համարեց և ցանկություն հայտնեց, որ ոչ բերովի, տեղական լինելու աշխատանքների ծավալը պետք է ընդարձակել ու խորացնել:
5. Պրեզիդենտի բացման խոսքից հետո ՀԳԱ-ի տարեկան հաշվետու զեկույցը ներկայացրեց փոխպրեզիդենտ Գալուստ Գալստյանը, ով (պրեզիդենտի՝ իմ վերը նշվածը շարադրելիս) ձեռքերի ժեստիկուլացիայով պրեզիդենտին ինչ-որ բան էր ուզում հաղորդել կամ հաղորդեց: Գալստյանո իր զեկուցման մեջ մեկ անգամ ևս շոշափեց բերովի, ոչ տեղական՝ ավելացնելով նաև եկվոր լինելու գաղափարները <…>:
6. Այս անգամ դահլիճից սկզբում ձեռքի շարժումներով, ապա ոտքի կանգնելով ու բարձրաձայն արտահայտվեց ՀԳԱ անդամ Էդուարդ Աղայանը. "Հնագիտական արժեքներն ուսումնասիրելիս՝ մենք՝ հայերս, բաց ենք թողնում մի ողջ բնագավառ՝ հայերի լեզուն <…>: Ուսումնասիրենք հայերեն լեզուն ու կտեսնենք, թե ինչ հնագիտական գանձեր է պարունակում այն <…>":
7. Այսպես, ուրեմն, եկվոր, բերովի, տեղական ու լեզու…:

8. Ի՞նչ կարող է ասել հայ ինժեներ մտավորականը, ով զբաղվում է անկանխատեսելի վարքագիծ ունեցող կառույցները կառավարելի դարձնելու հարցերով լեզու, եկվոր, բերովի, տեղական լինելու գաղափարների որորտում՝ այն էլ քրիստոնյա Հայաստանի 1700 - ամյա տարելիցի տարում:
9. Ասելիք ու անելիք ունեմ և կուզեի գոնե երկուստ անդամը ներկայացնել Ձեզ՝
   1. "եկվոր, բերովի ոչ տեղական ու հայերեն լեզուն",
   2. իմ երկարամյա "Մտորումների" ամփոփեզրակացությունը:
10. Հավատ, հույս, սեր (և միաբանություն)՝ ակնկալելով, որ Դուք կնշանակեք տեղը, օրն ու ժամը անձամբ Ձեզ ներկայացնելու նշած հարցերը (կամ…):

2. Հայոց լեզուն

1. 1. Մարդաբանների նորագույն ուսումնասիրությունների համաձայն Հայկական լեռնաշխարհը նոր քարի (նեոլիթ. Vl-ll հազ.-ում. մ.թ.ա.) դարաշրջանի սկզբներից սկսած բնակեցված է եղել Եվրոպական ռասայի հայակերպ (արմենոիդ) ցեղերով: Հայկական լեռնաշխարհը ու նրան հարակից հյուսիսային Միջագետքը, Փոքր Ասիայի արևելյան և իրանական բարձրավանդակի հյուսիսարևմտյան մասերն են համարվում հնդեվրոպական լեզվաընտանիքի հայրենիքը ([1], հ.13. է. 27):
2. Նեոլիթյան դարաշրջանից Էնեոլիթյան (պղնձաքար) դարաշրջանին անցման դարաշրջանում (մ.թ.ա. V-lV հազարամյակը ներառյալ) կատարվել է հնդեվրոպական լեզվով խոսող ցեղերի տրոհումն առանձին լեզվաբարբառների, ապա՝ ցեղակից լեզուների: Հայկական լեզուն հնդեվրոպական մայր լեզվից անջատվել և որպես առանձին լեզու ձևավորվել է մ.թ.ա. lll հազարամյակում, տես՝ նաև Մայր Աթոռ. Ս. Էջմիածնի բուն թվական հայոց՝ սկիզբը ≈ 2500թ. մ.թ.ա. ([1], է. 13. Է. 27):
3. Հայերի՝ որպես ժողովրդի կազմավորման պրոցեսն ավարտվել է Արարատյան (Ուրարտու) պետության ժամանակաշջանում (մ.թ.ա. lX-Vl դ.դ.): Արդեն մ.թ.ա. Vll դ. սկզբի աղբյուրներում Հայկական լեռնաշխարհը ներկայացվում է որպես հայ ժողովրդով բնակեցված միատարր երկիր Հայերի մարդաբանական միատարրության ու միալեզվության հիմքի վրա ([1], հ. 13. Է. 472):
4. Բերվածից երևում է, որ մ.թ.ա. ≈ 2500 թվականից մինչև հայկական գրերի ստեղծումը (Ս. Մեսրոպ Մաշտոց 405թ.), մոտ 3000 տարի Հայկական լեռնաշխարհում գոյատևել, գործել ու զարգացում է ապրել Հայոց բանավոր լեզուն, ինչն ապացույցն է Հայոց բանավոր լեզվի բնատուր կայունության հատկանիշի:
5. Բացի նշվածից, հայոց լեզուն ունի բնատուր մի հատկանիշ ևս՝ նրա բառակերտման գործելակերպը ենթարկվում է փոքրագույն գործողության սկզբունքին: Սկզբունքը ձևակերպել է Ֆրանսիայի ֆիզիկոս Պ.Լ.Մ. Մոպետյուին: 1740թ. ձևակերպել է մասերից բաղկացած ամբողջի ձևավորման սկզբունքը և 1744թ.՝ փոքրագույն գործողությքան սկզբունքը: Ըստ Մոպետյուիի՝ փոքրագույն գործողության սկզբունքը Աստծո գոյության ամենահամոզիչ ապացույցն է:

6. Բերենք մի օրինակ 5-րդ կետում նշվածը ցույց տալու համար: Հայ միջնադարյան փիլիսոփայության մեջ տարածված է եղել Էմպիտոկլէսի (մ.թ.ա. ≈ 490 - 430) չորս տարրերի ուսմունքը, ըստ որի աշխարհի ողջ բազմազանությունը պայմանավորված է չորս նախատարրերով՝ հող, ջուր, օդ, հուր (Ռուսերեն լեզվով՝ земля, вода, воздух, огонь): Հպանցիկ վերլուծության արդյունքում Հայոց լեզուն բերված նախատարրերի անունները կերտելու համար Ռուսերեն լեզվից երկու անգամ պակաս բաներ է գործածում (տառ, վանկ, էներգիա):
7. Ժամանակակից Հայոց լեզուն օժտված է հարուստ և ոճականապես շերտավորված բառապաշարով, տարբերակված հոմանիշների առատությամբ, նյութական աշխարհի իրերն անվանելու, վերացական բարդ հասկացություններն արտահայտելու կարողությամբ[1] ([1], է. 476):
8. 4, 5 և 7 կետերում բերվածը ու հայերի փոքրաթիվ քանակը Երկիր մոլորակի վրա՝ ահա այն հիմնական հատկանիշները, որոնցով Հայոց լեզուն XX դ. երկրորդ կեսում Միավորված Ազգերի Կազմակերպության հստակ հանձնաժողովի կողմից թողնվել էր այն 2, թե 3 լեզուների կազմում, որոնցից պետք է ընտրվեր ՄԱԿ-ի միակ պաշտոնական լեզուն:

3. Մեջբերումներ Աստվածաշնչից

1. "1. Դարեհի[2] երկրորդ գարուն Տէրոջ խոսքը <…> Զաքարիա մարգարէին եղաւ ըսելով ([1] Հին Կտակարան, է 1209):
2. "9.9. Մեծապես ուրախացիր, ով Սիոնի աղջիկ,
   Ցնծությամբ աղաղակե, ով Երուսաղեմի աղջիկ,
   Ահա քու թագավոր քեզի կու գայ,
   Անիկա արդար ու փրկիչ է, հեզ է ու իշու վրա հեծած <…>":
   ([1], Հին Կտակարան, է. 1207)
3. "2.1. Երբ Երուսաղեմի մոտեցանք <…>, այն ադեն Հիսուս իր աշակերտնէրէն երկուքը ղրկեց 2. եւ ըսավ անոնց. "Գնացեք այդ ձեր դիմացի գիւղը եւ հոն պիտի գտնեք կապված էշ մը ու անոր հետ ավանակ մը, արձակեցեք զանոնք ու ինձի բերեք: 3 եթե մէկը ձեզի բան մը ըսե, ըսեք թե Տէրոջը պետք են՝ եւ շուտ մը զանոնք պիտի ղրկէ": 4. Այս ամեն բաները եղան, որպեսզի կատարվի մարգարէին խոսքը <…>: 6. Աշակերտները գնացին, և, ինչպես Հիսուս իրենց պատվիրել էր, ըրին: 7. Ու բերին էշն ու ավանակը, անոնց վրա իրենց հանդերձները դրին ու նստան <…>: Ժողովուրդը առջեւէն ու հետեւեն կերթուր" ([1], Նոր Կտակարան, է . 30):
4. 16. "Ես Հիսուս իմ հրեշտակս ղրկեցի այս բաները ձեզի վկայելու եկեղեցիներուն մեջ: Ես Դավ թին արմատեն ու ցեղեն եմ ու առավոտյան պայծառ աստղը" ([1], Նոր Կտակարան, է. 346):

---

[1] Հայկական Սովետական Հանրագիտարան - "Սովետական Հայաստան", Երևան 1987, էջ 688 (հայտ 13):
[2] Դարեհ I-ը գահակալել է մ.թ.ա. 522թ.-ից, Դարեհ II-ը 425թ.-ից, Դարեհ III-ը 336թ.-ից:

5. Բերվածից վերցնում ենք տրանսպորտի միջոցի գաղափարը (էշ) և այն, որ էշը տրանսպորտի միջոցի իր դերը կատարում է կառավարող մարդանման էակի տակ եղած վիճակում:

4. Մեկ-երկու գաղափար ևս

1. Ամեն մի բնական լեզվի բառապաշարի հիմնական մասը կազմում են տվյալ լեզվով խոսող անհատների ամենօրյա հաղորդակցման անհրաժեշտ բառերը, որոնք, թեպետ, քանակապես քիչ են, բայց խիստ դիմացկուն ([1], հ.2. է. 298): հեղինակն ընդունում է, որ Հայոց լեզվում այդ քանակապես քիչ, բայց խիստ դիմացկուն բառերից են վերը նշված հող, ջուր, օդ, հուր, էշ, տակ բառերը, ինչպես նաև այդ բառարմատների միացությամբ (արմատ+արմատ+…) կերտված բառերը, մասնավորապես "հրեշտակ" բառը (հուր+էշ+տակ):
2. Հրեշտակ բառի հոմանիշները "1. (կրոն) Մարգարե, առաքյալ, անգեղոս , լուսաթռիչ <…> 2. <… > պատվիրակ: 3. Լրաբեր, <…> բանբեր, <…> մունետիկ: 4. Բարի, հեզ, համեստ <…>: Սիրելի [անձ]" ([2], է. 405-406):
3. Հրեշտակ բառը իր գոյությունը պահպանում է Հայկական գրերը ստեղծելուց էլ վաղ ժամանակներից (տես՝ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված մ.թ.ա. VII-II հազ.-ում կերտված ժայռապատկերները):
4. Անցում մ.թ.ա. III հազ.- ից մեր օրերին.
   ի՞նչ պետք է անել՝ գիտեն բոլորը,
   ի՞նչ պետք է անել տվյալ ժամանակահատվածում՝ գիտի հազարից մեկը,
   ինչպե՞ս պետք է անել՝ գիտեն հատ ու կենտ մարդիկ:

(Ասացվածք, աղբյուրը չեմ հիշում):

- Գիտե՞ն արդյոք…

"Աստված սեր է",- սովորեցնում է Աստվածաշունչը:

Սերը Հիսուս Քրիստոսի ուսմունքի էությունն է:

(Մանուկների Աստվածաշունչ, 1992, է. 500)

- Հիմնական գաղափարը՝

Սերը երբեք չի սպառվում.

թե մարգարեություններ են՝ պիտի չքանան,

թե լեզուներ՝ պիտի լռեն,

թե գիտություն՝ պիտի անցնի,

քանզի շատից քիչը գիտենք և շատից քիչն ենք մարգարեանում,

իսկ երբ գա կատարյալը, շատից քիչը կանհետանա: <…> մնում են այս երեքը՝ հույս, հավատ, սեր…

(Նոր կտակարան, Ս. Էջմիածին 1975, է. 472)

/Մ. Սեդրակյան /

Ք. Վանաձոր 24.05.2002թ.